№ 10 ԹԵՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏ

1896

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԹԵՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏ 13 № 10

# ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակւում է ամեն չորեքշաբթի օրերը

*Տարեկան գինն է Թէհրանում 12 ղռն. վեցամսեան 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղ. վեցամսեան 8 ղ. Ռուսաստան 3 ռուբլի. վեցամսեան 2 ռուբլի. Օտար երկիրները 8 ֆրանկ. վեցամսեան 5 ֆրանկ: Հասցէ՝ Téhéran Rédaction* ASTCH-AREVELIAN

*«ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆԻ» Խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի կիրակի եւ տօն օրերն:*

*Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով. իւրաքանչիւր բառին 1 շահի:*

## ԲԱՑՒԵԼ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ 1896 Թ.

## Ա. Տ. „ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ“ Ա. Տ.

Բաժանորդագինն է Թէհրանում տարեկան 12 ղռան վեցամսեայ 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղռան, վեցամսեայ 8 ղռան։ Ռուսաստան տարեկան 3 ռուբլի վեցամսեայ 2 ր. Օտար երկիրներ 8 Ֆրանկ վեցամսեայ 5 ֆ. Թէհրանում ձեռքով ծախուածները հատը 6 շահի: բաժանորդագինը կանխիկ է։

Բաժանորդագրութեան համար դիմել ուղղակի խմբագրութեան։ Téhéran, Redaction Astgh-Arevelian.

## Ա Զ Գ

Նամակներ և թղթակցութիւններ ուղղել հետևեալ հասցէին։

Խմբագրութիւն Աստղ-Արևելեանի՝ Redaction du journal Astgh-Arevelian

Խնդրում ենք այն ամեն պարոններից, որոնք գործ ունին խմբագրութեանս հետ, իրենց նամակները ուղղակի խմբագրութեանս հասցէին ուղղեն և ոչ թէ մասնաւոր անձանց։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

----

Կրօն և ազգութիւն. Հայկական հարց. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ճինում ենք և քանդում. Նամակ խմբագրութեան Էնզէլի. Նամակ Ռաշտից. Նամակ Դավրէժից. ԳԻՏԱԿԱՆ Ծխախոտի գործածութիւնը. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ։ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Դէպ 'ի Հայաստան. Մի քանի խօսք կնոջ մասին։

### ԿՐՕՆ ԵՒ ԱԶԳՈՒԹԻՒՆ

----

Մի՞թէ կարելի է ասել, թէ առանց կրօնի՝ ազգութիւն և առանց ազգութեան կրօնը կարող է պահպանուել. մենք լաւ գիտենք և խորապէս համոզուած ենք թէ այս երկու հսկաների յառաջադիմական զուգընթաց քայլերիցն է կախուած մեր կամ որևէ ազգի գոյութիւնը, դարերի ընթացքում առացած փորձառութիւնները մեզ լաւ հաւատացրել են թէ առանց մեր եկեղեցու և կրօնի գոյութիւնը պահպանելու, մեռած պիտի լինէր մեր ազգը, կորած կը լինէր մեր անունը և ոչ մի հետք անգամ չպիտի տեսնուէր մեզանից. մեր ազգային պատմութիւնն որդէն, մեր աչքի առաջ դնում է անթիւ պատերազմների մի անվերջ շարք, որ մղուել են մեր քաջ նախնեաց ձեռամբ ի սէր կրօնի և ազգի. ով գիտէ Ս. Վարդանայ պատերազմի և Ավարայրի դաշտի նահատակաց պատմութիւնը, պիտի վկայէ և հաստատէ թէ մեր ազգը միշտ մաքառել է իւր եկեղեցին հաստատ և անխախտ պահելու համար որին փարում է նա դեռ մինչև այսօր և պիտի փարէ մինչ յաւիտեան ուստի եթէ մի ազգ, ինչպիսին է հայը իւր Ս. եկեղեցու և կրօնի պաշտպանութեան համար տուել է, հազարաւոր բիւրաւոր և միլիոնաւոր զոհեր, նա չպիտի կարողանայ ասել, թէ առանց կրօնի կարող է կենդանի մնալ. հետևաբար աւելորդ և անտեղի է մի դաս ինքնակոչ քարոզիչների՝ եկեղեցու ճակատից արտասանած ճառերը և քարոզները, ժողովուրդը համոզեցնելու համար թէ նախ պէտք է կրօնասէր լինել և ապա ազգասէր, և թէ ազգը կամ ազգասիրութիւնը որևէ նշանակութիւն չունին, թէ մենք պէտք է նախ երկնից թագաւորութեան մէջ մեզ հանգիստ և անդորր օրեր պատրաստենք և ապա մտածենք մեր ներկայ վիճակի վրայ և շատ այսպէս փթած խօսքեր...

Այո, երկնից թագաւորութեան վրայ կարող են անդադար մտածել և նորա ոսկեղէն դռներն անգամ բաղխել միայն այն պարոնները որոնք ամսական հարիւրաւոր ոսկիներով վարձատրւում են միայն անդորր և ամենաքաղցր կեանք վարելու համար, որոնց կենաց ամենածանր դժուարութիւնն է, ննջարանից ճաշարան, և ճաշարանից գրադարանի անվերջ ճանապարհը կտրել օրական գէթ երկու անգամ և ոչ թէ անտառներում ու լեռներում ձմեռուան քարը ճաթեցնող ցրտի մէջ, մերկ, ոտաբոբիկ, անօթի և կիսամեռ տառապողը... Ի՞նչպէս կարելի է այս վերջինից պահանջել թէ դու այսօրուայ տառապանքդ մոռացի՛ր, կոյս աղջկադ լլկուելն և կնոջդ՝ քո ներկայութեամբ բռնաբարուելուն աչք գոցիր և թէ կաթնկեր մանկանդ, նիզակների ծայրին տեսնելիս սիրտդ քարացրու որդուդ գլուխը աչքիդ առաջ կտրւում է մի ողբար, վերջապէս քեզ խողխողում են մի՛ խօսիր, մի՛ դիմադրիր, մէկ խօսքով ապուշ կտրուիր և ձեռնատարած երկնից թագաւորութեան քաղցր օրերը խնդրէ...։

Իրօք, ոքանչելի հաշիւ է այդ և լաւ միջոց քրիստոնէական կրօնքը հաստատ և անմահ պահելու։ Ի՞նչպէս կարող է մի ազգ կրօնասէր լինել, եթէ նոյն իսկ իւր սիրած ու փայփայած կրօնքը պահելու և պաշտպանելու միջոցներն իւր ձեռքով և անպայման հնազանդութեամբ կջլատէ... կրօնասիրութիւնը ինչպէս է կարող գոյութիւն ունենալ երբ նորան սիրողները անյայտացել և բնաջինջ են դառել. վերջապէս որ ազգն է որ կարողացել է առանց իւր գոյութիւնը պաշտպանելու պահել և սիրել իւր կրօնը. մէկ խօսքով, գիտակը, մեռածը և անշունչը ինչպէս է կարող պարծենալ իւր կրօնասիրութեամբ. ըստ մեզ, այդ քարոզները և յորդորները ուրիշ ոչինչ են եթէ ոչ կրօնամոլութեան և մոլեռանդութեան հրաւիրող հրապուրիչ և ոսկեզօծ խօսքեր, որոնք, բացի մեր երիտասարդների ծիծաղը յարուցանել, ուրիշ ոչինչ չեն կարող անել. ուստի լաւ կանեն մեր ինքնակոչ երկնից թագաւորութեան հաւաղատ ժառանգ քարոզիչները որ չաշխատեն թմրեցնել մեր և մեր երիտասարդութեան, անսահման ճիգերով և անթիւ զոհողութիւններով արթնցրած զգացումը, որովհետև այդ անելով նոքա դաւաճանում են թէ աստծուն և թէ մարդկութեան և գիտակցաբար մեռցնում են նորա որդւոց բարոյականութիւնը ու մոլորեցնում են նոցա արթուն միտքը, վերջապէս այսպիսի մի վճռողական րոպէում և հոգեվարքում որ գտնւում է մեր կիսակործան ազգը երբէք այդպիսի անդամալուծող և անհամ ու հոտ քարոզների պէտքը չի զգում, հանգիստ պէտք է թողնել նրան։

Սոկրատ Մ. Գելոֆեանց.

